ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԵՐՊԱՐԱՍՏԵՂԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՂԱՊԱՐՈՒՄԸ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Գրականության մեջ կերպարաստեղծման խնդիրը բավականաչափ քննարկվել և ուսումնասիրվել է գրականագիտական մոտեցմամբ՝ սյուժետային զարգացման, հեղինակային մտադրության, գրական ուղղության, ինչպես նաև հեղինակի ոճի քննարկման միջոցով: Այնուամենայնիվ, սակավ են լեզվաոճական տեսանկյունից խնդրի ուսումնասիրության վերաբերյալ աշխատությունները: Կերպարաստեղծման լեզվական միջոցները պայմանականորեն կարող ենք բաժանել երկու հիմնական ենթախմբի՝ բառային և շարահյուսական, որոնք գործում են որպես միասնական համակարգ՝ փոխպայմանավորելով միմյանց գոյությունը որպես կերպարաստեղծման միջոց: Լեզվի շարահյուսական մակարդակում կերպարաստեղծման ուսումնասիրությունը տրամաբանորեն ենթադրում է կերպարների հատկալեզվի վերլուծություն՝ արտահայտչական շարահյուսական միջոցները դուրս բերելով: Այլ կերպ ասած՝ արտահայտչական շարահյուսական միջոցները հանդես են գալիս որպես կերպարաստեղծմանը նպաստող գեղարվեստական կոդավորման եղանակ:

Շարահյուսությունը լեզվում բառային ատաղձը համակարգող ամբողջությունն է, որը բանաստեղծական տեքստի դեպքում առանձնանում է իր իսկ կանոններից շեղվելու միտումով: Հենց այս միտումն էլ ծառայում է որպես նշույթավորման և հեղինակային մտադրության ընդգծման եղանակ: Շարահյուսական կանոններից այսպիսի միտումնավոր ու պատճառաբանված շեղումները և, այսպես ասած, անսովոր կառույցները քննության են առել Ռոման Յակոբսոնը[1] և այլ լեզվաբաններ՝ վեր հանելու համար պոեզիայի շարահյուսական առանձնահատկությունները, որոնք նպաստում են բանաստեղծական ազդեցության ապահովմանը: Լեզվաբանության մեջ ընդունված է չեզոք շարահյուսական կանոններից շեղումներն անվանել «պոետիկ արտոնություն» (poetic license)[2]: «Պոետիկ արտոնությունների» ամբողջությունը գիտական շրջանակներում միավորվում է «պոետիկ շարահյուսություն» (կամ «բանաստեղծական շարահուսություն») եզրի ներքո:

---

[1] Տե՛ս **Pomorska K.**, **Stephen R.,** ed. Verbal Art, Berbal Sign, Verbal Time. Minnesota: University of Minnesota, 1985:

[2] Տե՛ս **Ferguson M., Salter M. J., Stallworthy J.,** ed. The Northon Anthology of Poetry. Fifth Edition. New York: W. W. Norton & Company, Inc., 2005, էջ 2054:

Մի շարք լեզվաբաններ (հատկապես ռուսալեզու) կիրառում են նաև «արտահայտչական շարահյուսություն» եզրույթը, որն ընդգրկում է լեզվական ոճ և գեղարվեստականություն կերտող շարահյուսական միջոցների ամբողջությունը: Ըստ երևույթին, երկու եզրույթներն էլ կիրառվում են լեզվում և հատկապես պոեզիայում՝ հեղինակային միտումներով պայմանավորված՝ շարահյուսական ընդունված արտահայտչամիջոցների և լեզվական նորմերից շեղումների համակազմը նշելու համար: Պոեզիա կերտող այս շարահյուսական միջոցներով ձևավորվում է ինչպես ստեղծագործողի, այնպես էլ ստեղծագործության կերպարների հատկալեզուն:

Կերպարաստեղծման միջոցների ուսումնասիրության դիտանկյունից պոետիկ շարահյուսության մի քանի առանցքային միջոցների վերհանումը հնարավորություն կտա գնահատելու շարահյուսության դերը կերպարաստեղծման գործընթացում և շարահյուսական միջոցների գեղարվեստական ազդեցությունը տեքստում:

Անհերքելի են հեղինակի կողմից կերպարի խոսքային բնութագրի ձևավորման մեջ կոնկրետ իմաստների հաղորդման ձգտումը և այդ իմաստներն ստանալու համար բուն շարահյուսական միջոցների կիրառումը: Այս համատեքստում շարահյուսության դերը հանգամանալից վերլուծել է Հարի Վարֆլը, որը հակադրվում է Օ. Յեսպերսենին և ձևաբանական վերլուծությունն առաջնահերթություն համարող իր ժամանակակից բազմաթիվ լեզվաբանների՝ նշելով, որ վերջիններս անտեսում են շարահյուսության իմաստային կարևոր դերը[3]:

Վարֆլն ուսումնասիրում է ամերիկյան և անգլիական գրականությունը՝ հատուկ ընդգծելով Ուոլթ Ուիթմենի և Ուիլյամ Շեքսպիրի ստեղծագործությունների քննությամբ արձանագրված շարահյուսական այն հնարները և «շեղումները», որոնք առանցքային նշանակություն ունեն համապատասխան ստեղծագործության հասկացական շրջանակները, ուղերձը և ոճը կերտելու հարցում: Վարֆլի ուսումնասիրությունից ուշագրավ են այն շարահյուսական կառույցները, որոնք ծառայում են որպես կերպարաստեղծ միջոցներ: Վերջիններս պայմանականորեն կարելի է բաժանել չորս խմբի՝

1. նախադասության հաղորդակցական տեսակներ
   - հարցական
   - հրամայական
   - ժխտական
   - բացականչական

Նախադասության այս տեսակներից մեկի միտումնավոր կիրառությունը կերպարի խոսքում ընդգծում է կերպարի բնավորության

[3] Տե՛ս **Warfel. H.,** Syntax Makes Literature // College English, 1960, Vol. 21, № 5. National Council of Teachers of English, էջ 251-255:

գծերից մեկը կամ կերպարի կարգավիճակը: Այսպես, հարցական նախադասություններն արտահայտում են անորոշություն, փնտրտուք, հրամայական նախադասությունները՝ իշխելու ձգտում, ժխտական և բացականչական նախադասություններն ընդգծում են կերպարի զգացմունքայնությունը: Պետք է նշել, որ, ի տարբերություն ուղղակի հարցման, հռետորական (կամ ճարտասանական) հարցման դեպքում ստացվում է հակառակ պատկերը. արտահայտվում է կերպարի վստահությունը, համոզմունքը որևէ հարցում:

2. Շրջադաս դերբայական կառույցներ — առաջին դերբայ / երկրորդ դերբայ

Կերպարի խոսքում շրջադաս կառույցների միջոցով տրամաբանական շեշտը փոխանցվում է առաջին և երկրորդ դերբային, ընդգծվում է վերջինիս իմաստը տվյալ համատեքստում:

3. «Լրացում/ցուցիչ – լրացյալ» կամ «լրացյալ – լրացում/ցուցիչ»:

Նշված կառույցները ստեղծում են յամբական և դակտիլյան ոտքեր, որոնք ապահովում են պոեզիայի ռիթմը: Իմաստաստեղծման գործընթացում այս կառույցների շնորհիվ շարահյուսությունը փոխգործակցում է լեզվի բառային և հնչյունական մակարդակների հետ, օրինակ՝ կերպարի խոսքում կարող է ընդգծվել բաղաձայնույթը և ի հայտ գալ դրանով ստեղծվող պատկերը:

4. Հակադրույթ:

Արդյունավետ է հակասական կերպար ստեղծելիս:

Վերը քննարկված շարահյուսական միջոցները կարող են կատարել առանցքային դեր, որևէ ստեղծագործության կերպարների ստեղծման համար: Այնուամենայնիվ, նշված կառույցները կազմում են կերպարաստեղծ շարահյուսական միջոցների միայն մի փոքր մասը: Ընդհանրապես, շարահյուսության ներուժը (նաև կերպարաստեղծման տեսանկյունից) անսպառ է, քանի որ համատեքստում ցանկացած շարահյուսական կառույց կարող է դրսևորել նոր իմաստ:

Ժամանակակից արտահայտչական շարահյուսության տեսություններում ընդունված է շարահյուսական միջոցները բաժանել երկու հիմնական խմբի՝ որակելով դրանք որպես շարահյուսական խտացում (զեղչված նախադասություններ, անշաղկապություն, առկախ միտք և այլն) կամ շարահյուսական ընդլայնում (ներդրյալ կառույցներ, հատվածավորում, պարցելացիա, շարահյուսական կրկնություն և այլն): Շարահյուսական խտացման միջոցներից կառանձնացնենք անշաղկապությունը, քանի որ այն, ի տարբերություն շարահյուսական խտացման այլ միջոցների, քիչ է քննարկվել իմաստային տեսանկյունից, բայց ունի իմաստային մեծ ներուժ և կարող է կիրառվել գրական կերպարի խոսքում իմաստային շեշտադրումներ կատարելու համար:

Կոպնինան անշաղկապությունը սահմանում է որպես շաղկապնե-

րի միտումնավոր զեղչում այնպիսի շարահյուսական կառույցներում, որոնց ոչ բանաստեղծական (չեզոք) կիրառությունը գրական լեզվում ենթադրում է շաղկապների առկայություն[4]: Քանի որ անշաղկապությունը շարահյուսական կառույցի խտացման միջոց է, դրա առաջնային գործառույթն է շարահյուսորեն սակավաթիվ կառույցում զուգադրել թվարկվող միավորների իմաստը:

Անշաղկապությամբ հարադրված միավորների իմաստային փոխհարաբերությունների բացահայտման համար քննարկենք Հենրիխ Լաուսբերգի դասակարգումը, որը թույլ է տալիս վեր հանել անշաղկապության շնորհիվ իրականացված իմաստային իրացումները: Լաուսբերգը դասակարգելիս հաշվի է առել այն շաղկապը, որը չեզոք, ոչ բանաստեղծական շարահյուսության պարագայում տեսականորեն կարող էր կիրառվել տվյալ նախադասության մեջ.

1. **Հավելական անշաղկապություն (asyndeton additivum):** Միավորները կապակցվում են՝ կազմելով համադաս անդամների շարք: Այս դեպքում կիրառման նպատակն է հաղորդել բազմակիության և շարունակականության իմաստ:

2. **Ամփոփիչ անշաղկապություն (asyndeton summativum):** Միավորներն արտահայտում են որևէ հավաքական իմաստի առանձին օրինակներ: Այս կառույցը կարելի է համեմատել իմաստային դաշտի կառուցվածքի հետ, որտեղ առկա են իմաստային դաշտը միավորող հատկանիշ և միևնույն դաշտի առանձին միավորներ: Եթե ընդհանուր անդամը նշված է սկզբում, ապա գործ ունենք իմաստային կոնկրետացման, հակառակ դեպքում՝ իմաստային ընդհանրացման (գեներալիզացիա) հետ:

3. **Տրոհիչ անշաղկապություն (asyndeton disiunctivum):** Միավորներն իմաստային տեսանկյունից միմյանց հակադրվում են կամ պարադոքսային են: Անշաղկապության այս տեսակը, որը կիրառվում է պարադոքս ոճական հնարի հետ միաժամանակ, ստեղծում է անորոշության, մտավոր երկբևեռման պատկեր:

4. **Հակադրման անշաղկապություն (asyndeton adversativum):** Այս դեպքում միավորները հաջորդում են իմաստային հակադրման (antithesis) սկզբունքով: Եթե տրոհիչ անշաղկապության դեպքում միավորների կապը թույլ է, ապա հակադրման անշաղկապությունը ենթադրում է միավորների՝ տրամաբանորեն հակադարձ փոխկապակցվածություն: Այս միջոցը կիրառելի է հակասական երևույթ կամ հակասական կերպար բնութագրելիս:

5. **Պատճառական անշաղկապություն (asyndeton causale):** Բնութագրվում է համադաս անդամներով, որոնք հանդես են գալիս որպես որևէ բանի պատճառ:

---

[4] Տե՛ս **Копнина Г. А.** Риторические приемы современного русского литературного языка: опыт системного описания. М.: издательство «Флинта», 2012, էջ 375:

6. **Բացատրական անշաղկապություն (asyndeton explicativum):** Ներկայացվում է որևէ իրավիճակ կամ երևույթ և բացատրվում հաջորդող համադաս անդամներով:

7. **Հետևանքային հարաբերություններ ցույց տվող անշաղկապություն (asyndeton conclusivum):** Կիրառվում է նախադասության վերջում, ցույց է տալիս որևէ բանի հետևանք՝ ենթադրելով չգործածված «որովհետև» շաղկապի առկայություն չեզոք շարահյուսական կառույցի դեպքում[5]:

Դասակարգման այս մոտեցումը հնարավորություն է տալիս անշաղկապությունը քննարկելու ոչ միայն էսթետիկ, այլև իմաստային տեսանկյունից. հաշվի են առնվել համադաս անդամների իմաստային փոխհարաբերությունները միմյանց, ինչպես նաև նախադասության այլ անդամների միջև: Անշաղկապության կիրառությունը որևէ ստեղծագործության կերպարի խոսքում կարող է ձևավորել՝ 1. կերպարի բնութագիրը (հոգեկան, մտավոր վիճակ, հույզեր, վերաբերմունք, ֆիզիկական վիճակ և այլն), 2. կերպարի կարծիքը այլ կերպարների, երևույթների կամ իրավիճակների մասին:

Շարահյուսական խտացման հակառակ երևույթն է շարահյուսական ընդլայնումը, որն ընդգրկում է մի շարք ենթակարգեր: Լայն կիրառություն և զանազան քերականական-իմաստային գործառույթներ ունեն հատկապես ներդրյալ կառույցները և պարցելացիան:

Ուսումնասիրելով արտահայտչական շարահյուսության խնդիրը գեղարվեստական գրականության մեջ՝ Ա. Ալեքսանդրովան, ի տարբերություն ժամանակակից հայերենում ընդունված տարանջատման, միջանկյալ և ներդրյալ արտահայտությունները քննարկում է միևնույն եզրի կիրառմամբ (парентетические внесения)՝ համարելով այն յուրօրինակ շարահյուսական արտահայտչական միջոց[6]: Նա նշում է, որ ներդրյալ արտահայտությունների կիրառումը բնորոշ է ինչպես գիտական տեքստին, այնպես էլ գեղարվեստական գրականությանը, ընդ որում, վերջինում ներդրյալ արտահայտությունների ընդգրկումն ուղղված է հուզական-գեղարվեստական ազդեցության ստացմանը, ինչպես նաև կերպարի բնութագրմանը: Այդ արտահայտությունները եղանակավորում են ոչ միայն իրողությունը, այլև իրողության բացակայությունը, քանի որ գեղարվեստական կերպարներն արտահայտվում են ինչպես եղածի և գոյություն ունեցողի, այնպես էլ անհնարինի, դեպքերի հնարավոր զարգացման, ցանկությունների, ենթադրությունների, կասկածների մասին[7]:

Ներդրյալ արտահայտությունները նախադասության մեջ չեն կատարում որևէ շարահյուսական գործառույթ, սակայն ունեն տեքստա-

---

[5] Տե՛ս **Lausberg, H.,** Elemente der Literarischen Rhetorik. Munich: Max Hueber Verlag, 1963:

[6] Տե՛ս **Александрова О. В.** Проблемы экспрессивного синтаксиса, М.: Высшая школа, 1984:

[7] Տե՛ս նույն տեղը, էջ 45:

կազմիչ նշանակություն: Նրանց դիրքը նախադասության մեջ պայմանավորված է ոչ թե վերջինիս գծային շարահյուսությամբ, այլ ստեղծագործության իմաստային և ռիթմային կառուցվածքով, ինչպես նաև համապատասխան շեշտադրումներ կատարելու հեղինակային մտադրությամբ:

Իմաստային տեսանկյունից Ալեքսանդրովան ներդրյալ կառույցները բաժանում է երեք հիմնական խմբի.

1. **Հետահայաց հղման արտահայտություններ (категория отсылки):** Ընդգրկում է բառեր և շարահյուսական կառույցներ, որոնք կիրառվում են որևէ փաստ, գրական աղբյուր, նախկինում ասված խոսք կամ այլ տեղեկատվություն նշելու համար, ինչպես օրինակ՝ hence (ուստի), then (հետևապես), as I have said (ինչպես նշել եմ) և այլն:

2. **Օրինակի մեջբերման համար կիրառվող կառույցներ (категория экземплификации):** Ընդգրկում է բառեր և շարահյուսական կառույցներ, որոնց միջոցով բերվում են օրինակներ, կատարվում ճշգրտումներ, օրինակ՝ for instance, for example (օրինակ, օրինակի համար):

3. **Գնահատողականության կառույցներ (категория делиберативности):** Բառեր կամ շարահյուսական կառույցներ, որոնք արտահայտում են տարատեսակ զգացումներ, սուբյեկտիվ գնահատականներ, մտայնություններ, օրինակ՝ at any rate (ամեն գնով), it might be said (կարելի է ասել), doubtless (անկասկած), indeed (անշուշտ), perhaps (թերևս)[8]:

Կերպարաստեղծման տեսանկյունից վերը բերված կարգերից առավել արդյունավետ է վերջինը՝ գնահատողականությունը (категория делиберативности), քանի որ այդպիսի շարահյուսական կառույցները ոճականորեն նշույթավորված են. արտահայտում են կերպարի վերաբերմունքը որևէ իրողության կամ դրա բացակայության նկատմամբ՝ կասկածներ, զգացմունքներ, զգացողություններ, ապրումներ:

Արտահայտչական շարահյուսության մեջ մեծ հետաքրքրություն ներկայացնող մյուս երևույթը՝ «պարցելացիան», շարահյուսության մեջ առաջին անգամ ներդրել է Ա. Ֆ. Եֆրեմովը. նա այն բնորոշում է որպես շարահյուսական միջոց, որը նախադասությունը բաժանում է մասերի՝ վերածելով այդ մասերն ինքնուրույն նախադասությունների[9]: Վ. Գ. Գակը պարցելացիայի միջոցով առանձնացված կառույցը համարում է երևույթ, որը գտնվում է նախադասության և վերհատույթային միասնության միջև[10]: Լեզվաբանները ընդհանուր առմամբ միակարծիք են պարցելացիան նախադասության շարահյուսական տրամահատման մասնավոր երևույթ որակելու հարցում: Պարցելացիայի գլխավոր տա-

---

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 30-33:

[9] Տե՛ս **Ефремов А.** Язык Н. Г. Чернышевского. Саратов: Саратовский государственный педагогический институт, 1951, էջ 76-78:

[10] Տե՛ս **Гак В. Г.** Теоретическая грамматика французского языка, М.: Добросвет, 2000:

բանջատիչ հատկանիշը, որով այն առանձնանում է շարահյուսական ընդլայնման և հատկապես տրամահատման մյուս ձևերից (օրինակ՝ տավտոլոգիական/կրկնաբանական ենթակա), նախադասության որևէ անդամ առանձին նախադասության տեսքով ներկայացնելն է՝ տվյալ լեզվի կետադրության նորմերին համապատասխան: Պարցելացիայի կիրառման առաջնային նպատակն է առանձնացնել նախադասության բառային կազմի որևէ հատված, այն դարձնել նշույթավորված:

Ժամանակակից լեզվաբանության մեջ պարցելացիային անդրադարձել են մի շարք լեզվաբաններ (Ալեքսանդրովա, Գակ, Վաննիկովա, Մարիշովա և այլք), որոնք միակարծաքին են, որ՝

1. պարցելացիայի միջոցով առանձնացվող նախադասությունը ձեռք է բերում հատուկ շեշտադրում, այսինքն՝ առանձնացվող հատվածը վերածվում է նախադասության իմաստային կենտրոնի:

2. Պարցելացիան բացահայտում է կերպարի մտքի հոսքը, օրինակ՝ խառնված մտքեր, շփոթմունք:

3. Պարցելացիան կարող է ծառայել որպես յուրահատուկ շարահյուսական միջոց՝ նախադասությունը, այսպես ասած, «վերնագրելու» համար. նախադասության առաջին բառը միտումնավոր առանձնացվում է մյուս անդամներից, տեղեկատվությունը խտանում է առանձնացված հատվածում:

Ոչ միայն վերը քննարկված շարահյուսական արտահայտչական միջոցները, այլև ընդհանրապես որևէ շարահյուսական երևույթ, հատկապես պոեզիայում, պատճառաբանված է, հետևաբար կարելի է և պետք է տեքստի վերլուծության ժամանակ բացահայտել շարահյուսությամբ կոդավորված տեղեկատվությունը: Վերջինս ցույց է տալիս հեղինակի, ինչպես նաև ստեղծագործության կերպարների տեսակը, վերաբերմունքը, մտայնությունները և այլն:

Շարահյուսության՝ կերպարաստեղծմանը նպաստող լեզվական միջոց լինելու իսկությանը կարելի է համոզվել նախադասության արտահայտչական, պոետիկ շարահյուսական կառույցները և դրանց միավորման արդյունքում ստացված իմաստային, հասկացական շրջանակները համեմատելով միևնույն միտքն արտահայտող, սակայն չեզոք կառույցով նախադասության և վերջինիս ձևավորած իմաստային շրջանակների հետ:

Այսպիսով, գեղարվեստական գրականության մեջ արտահայտչական շարահյուսական միջոցները, լինելով իմաստաստեղծման համար կարևոր բաղադրիչ, մեծապես նպաստում են կերպարաստեղծմանը՝ բացահայտելով կերպարի էությունը, նրա արժեքների և ընկալումների հասկացական դաշտը, վերաբերմունքը երևույթներին և այլոց հույզերն ու ապրումները:

Դիտարկենք Պ. Բ. Շելլիի «Ազատագրված Պրոմեթևս» լիրիկական դրամայից հետևյալ օրինակը՝

No change, no pause, no hope! Yet I endure.

«Եվ ես չունեմ դադար ու հույս, բայց տոկում եմ» (թարգմ.՝ Մկրտիչ Սողիկյան):

Օրինակում առկա է արտահայտչական շարահյուսության երեք միջոց՝ բառային կրկնություն, անշաղկապություն և պարցելացիա, որոնց կիրառությունը պայմանավորված է Պրոմեթևսի բազմազան հույզերի և զգացողությունների լեզվականացման անհրաժեշտությամբ: Անշաղկապության և կրկնության կիրառությունը կարելի է մեկնաբանել ներկայացված շարքի անավարտ, շարունակական լինելու բնույթով: Պատկերվում է Պրոմեթևսի մտավոր և ֆիզիկական տառապանքի շարունակականությունը: Հաջորդող պարցելացված կառույցը (Yet I endure) նախադասությունից անջատվել է բացականչական նշանի միջոցով: Սույն օրինակում պարցելացիայի առաջնային գործառույթը հակադրության պատկեր ստեղծելն է. լեզվականացվում են Պրոմեթևսի հաստատակամությունը և տոկունությունը:

Կերպարաստեղծման նպատակով արտահայտչական շարահյուսական միջոցների կիրառությունների կաղապարը ներկայանում է հետևյալ կերպ՝



Ներկայացված կաղապարում կերպարն ընդհանրական է և կիրառելի է կերպարաստեղծման համար առհասարակ, իսկ առանձին կերպարների ուսումնասիրության համար ակնհայտ է, որ անհրաժեշտ է մոդելի տեղայնացում:

Բանալի բառեր – *կերպար, բնութագիր, արտահայտչական շարահյուսություն, ազդեցություն, պատկերավորման միջոց, պոետիկ շարահյուսություն, պոեզիա, կաղապար*

АЙК АМБАРЦУМЯН – ***Моделирование художественного эффекта синтаксических средств в поэзии.*** – Статья раскрывает эффект, возникающий в стихах, когда образы создаются сугубо синтаксическими средствами. Исследуются выразительные свойства, заключённые в синтаксисе, их потенциал, способный придать поэтическому произведению внутреннюю напряжённость. Выявляется, как эти средства воздействуют на идеологический вектор и основные черты формируемых образов. Результаты продемонстрированы в модели, предназначенной служить инструментом анализа поэтических произведений.

Ключевые слова: *образ, характер, экспрессивный синтаксис, эффект, оборот речи, поэтический синтаксис, модель*

HAYK HAMBARDZUMYAN – ***The Modeling of the Artistic Effect of Syntactic Means for Character Depiction in Poetry.*** – The goal of the present article is to uncover the literary effect of syntactic means of character depiction in poetry. A research is conducted among expressive syntactic means aiming to find out their intrinsic potential to serve the mentally strenuous process of depicting characters in works of poetry. The investigation elicits the effects that the abovementioned means have on shaping the main traits and ideological vectors of characters. The results of the research are epitomized by a model designed to be employed as a tool for analyzing characters in all sorts of poetic works.

Key words – *character, depiction, expressive syntax, effect, locution, devices, poetic syntax, poetry, model*